«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1427-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1427-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և հետագայում Եվրասիական տնտեսական միության անդամ այլ պետություններ արտահանվող Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված ապրանքների համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի ներկայացման մասին» N 1427-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի N - Ն

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և հետագայում Եվրասիական տնտեսական միության անդամ այլ պետություններ արտահանվող ապրանքների համար Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին՝ համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմիններին ներկայացվում են միայն այն դեպքում, երբ համապատասխանության գնահատման փաստաթղթերով ներմուծման ենթակա ապրանքներն արտահանվում են Եվրասիական տնտեսական միության անդամ այլ պետություններ, բացառությամբ որոշմամբ սահմանվող Հավելվածում ներառված ցանկում ընդգրկված տեխնիկական կանոնակարգերի, որոնց համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմիններին պետք է ներկայացվեն ներմուծման ժամանակ։
2. Հաստատել Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի ցանկը, որոնց մասով առկա է համապատասխանության գնահատման փաստաթղթերի առկայության պարտադիր պահանջ՝ համաձայն հավելվածի։

3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա։

4. Սույն որոշման 2-րդ կետը և դրանով հաստատված հավելվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 1-ից, բացառությամբ 9-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից, ինչպես նաև 6-րդ կետի, որի մասով Հայաստանի Հանրապետություն ներմուծման ժամանակ համապատասխանության գնահատման փաստաթղթերի առկայության պահանջն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման պահից։

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

սեպտեմբերի 16-ի N 1427-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԵԱՏՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ, ՈՐՈՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԿԱ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ

1. «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011) (բացառությամբ՝ մատնահարդարման և պեդիկյուրի համար նախատեսված սարքեր (ԱՏԳ ԱԱ 850980000 ծածկագիր), լվացքի մեքենաներից (ԱՏԳ ԱԱ 8450200000 ծածկագիր), ձայնային համակարգերից (ԱՏԳ ԱԱ 8518309500 ծածկագիր), էլեկտրատաքացման գործիքից (ԱՏԳ ԱԱ 8515110000, 8515190000, 851521000, 8515290001, 8515290009 ծածկագրեր), մալուխներ, հաղորդալարեր և քուղերից (ԱՏԳ ԱԱ 8516808000))
2. «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011)
3. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011)
4. «Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011)
5. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 009/2011)
6. «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին և մազութին ներկայացվող պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 013/2011)
7. «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 014/2011) (միայն՝ բիտում՝ նավթային, ճանապարհային, մածուցիկ (ԱՏԳ ԱԱ 2713200000 ծածկագիր)
8. «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2012)
9. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) (բացառությամբ՝ եզակի տրանսպորտային միջոցների և ավտոպահեստամասերի)
10. «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011) (բացառությամբ՝ լվացքի մեքենաներից (ԱՏԳ ԱԱ 845020000 ծածկագիր), խոնավեցուցիչներ, գոլորշեցուցիչներ, չորացուցիչներից (ԱՏԳ ԱԱ 8479600000 ծածկագիր), մատնահարդարման և պեդիկյուրի համար նախատեսված սարքեր (ԱՏԳ ԱԱ 850980000 ծածկագիր), էլեկտրական կարապիկից (ԱՏԳ ԱԱ 8425310000 ծածկագիր), սկաներներ, տպիչներ և պատճենահանող սարքերից (ներառյալ բազմաֆունկցիոնալ սարքեր) (ԱՏԳ ԱԱ 8443321002, 8443321003, 8443329101 ծածկագրեր), անխափան սնուցման աղբյուրներից (ԱՏԳ ԱԱ 8504408300, 8504408500, 85044087000, 8504409100 ծածկագրեր), ակտիվ ձայնային

համակարգեր՝ փոփոխական հոսանքի աղբյուրից սնվողից (ԱՏԳ ԱԱ 8518293008, 8518299600, 8518309500 ծածկագրեր))

11. «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011)
12. «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011)
13. «Մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011)
14. «Ճարպայուղային արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 024/2011)
15. «Հատուկ նշանակության սննդամթերքի որոշակի տեսակների, այդ թվում դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012)
16. «Քսանյութերին, յուղերին և հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 030/2012)
17. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013)
18. «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013)
19. «Ծխախոտային արտադրանքի մասին» (ՄՄ ՏԿ 035/2014)
20. «Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերին ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 036/2016)
21. «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ՄՄ ՏԿ 037/2016) (բացառությամբ՝ ստացիոնար հեռախոսների (ԱՏԳ ԱԱ 8517140000 ծածկագիր))
22. «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 040/2016)
23. «Հրդեհային անվտանգության և հրդեհի մարման ապահովման միջոցների պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 043/2017)
24. «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 044/2017)
25. «Թռչնի մսի և դրա վերամշակման արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 051/2021)։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ